

«Սուլթան Մահմետին Փարման, զի յորժամ Յակոբ Կաթողիկոսն զայդ վերոյիշեալ Փարմանդ առնու, եւ ըմբերանէ զլրբութիւնն Եղիազարու, Եղիազարն ոչ զազարի ի նոյն լրբութենէն: Վասն որոյ վերստին արդ առնէ յԱթոռոյ Յակոբ Կաթողիկոսն նոյնոյ Թաղաւորին, թէ ես քո Փարմանովդ եղէ Կաթողիկոս եւ 1700 ամէ որ այս է մեր Աթոռն, եւ սուրբ միւռոնն մեր աստ օրհնի, եւ այլ այսպիսիք: Այժմ Եղիազարն ոչ զազարի ի հակառակութենէն: Վասն որոյ եւ թաղաւորն գրէ զայս Փարմանս ի վերայ ամենայն իշխողաց, զի ուր եւ իցէ Եղիազարն՝ ընկճեսցեն զլրբութիւն նորին, եւ թամպէ՛հ արասցեն. ի թուոջն տաճկաց ՌՁԱ» (1670) (27):

Եղիազար՝ իր ըմբոստութեան մէջ կը մնայ անընկճելի: Ժամանակ մը աստանդական կը շրջի. ապա Սարգիս Թեքիրտաղցիի (1670) եւ Աստուածատուրի (1671) վախճան: Էմէն յետոյ, ան դարձեալ Եպարքոսը կը սիրաշահի, Երուսաղէմի Պատրիարքութեան նոր հրովարտակ մը կը ստանայ, եւ Աթոռին կը տիրանայ նաեւ Կաթողիկոսական անունով ու «ճոխութեամբ» մինչեւ 1681, երբ Էջմիածնի Կաթողիկոս կ'ընտրուի (28):

(27) Զամբո, էջ 239:

(28) Ագգպ. Բ. 2575. Արարատ. ԼԶ. Տարի, 1902, Սեպտ.—Նոկտ., համար Թ-Ժ. էջ 785: Հայրեմիթ Ամսագիր, Զ. Տարի, 1928, քիւ 3 (63), Յունր. էջ 87: